ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-9/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 27 -ը ապրիլի 2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և **«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ-ն՝** ի դեմս ընկերության տնօրեն **Ս. Շիլաջյանի**, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **06.02.2018թ.** կնքված **№ ԳՀԱՊՁԲ-9/5-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.13 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով, նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է ***748,880 (յոթ հարյուր քառասունութ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն***, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետով նախատեսված կարգով, բայց ոչ ուշ, քան 10.12.2018թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ԶՈւ ռազմաբժշկական վարչությունը:**

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ**
ք. Երևան Բագրևանդի	**Ք. Երևան, Շիրակի 1/68**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**«Արարատբանկ» ԲԲԸ**
Հ/Հ 900011144129	**Հ/Հ 1510031007170100**
ՀՎՀՀ 02522157	**ՀՎՀՀ 02606482**
ՀՀ պաշտպանության նախարարության	**տնօրեն**
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ս. ՇԻԼԱՋՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-9/5-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Մատակարարումը՝ 2018թ	
						2-րդ եռամսյակ,	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ
1.	**Հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ B06AB** /Արյունատրամալուծիչ սպիտակուցազերծ՝ հորթի արյունից, hemodialysate protein-free from calves blood/	սրվակ	1,000	748,88	748,880	500	500

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-9/5-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին/դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2018թ., համապատասխան ամիսների, այդ թվում՝								
				Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.18թ.
1.	**Հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ B06AB** /Արյունատրամալուծիչ սպիտակուցազերծ՝ հորթի արյունից, hemodialysate protein-free from calves blood/	33691185/312/10/7	748,880	374,440	374,440	374,440	374,440	374,440	374,440	748,880	748,880	748,880

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏՍ դեպարտամենտի պետ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ
տնօրեն

Ս. ՇԻԼԱՋՅԱՆ